

Ալաշկերտ համայնքի ղեկավարի 2016 թվականի 1-ին  
կիսամյակի

Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Գ. Ալաշկերտ

15.07.2016թ.

Ալաշկերտ համայնքը ունենալով խաղողագործության և պտղաբուծության ուղղվածություն այս տարվա առաջին կիսամյակը բարենպաստ չէր գյուղատնտեսության համար: 2016 թվականի առաջին կիսամյակում տեղի ունեցած զարնանային ցրտահարությունները մեծ վնաս հասցրեցին պտղատու այգիներին և խաղողին: Համայնքում ոռոգման խնդիր չի եղել: 2016 թվականի առաջին կիսամյակում հավաքագրվել է 5270741 դրամ հողի հարկ և 3712153 դրամ գույքահարկ:

Կատարվել են բազմաթիվ աշխատանքներ.

1. Հորդառատ անձրևների պատճառով ճանապարհները խիստ վերանորոգման կարիք ունեին, կենտրոնական փողոցներում կատարվել են հարթեցման աշխատանքներ:
2. Խմելու ջրի խողովակաշարը կառուցվել է 50-60-ական թվականներին, որը ունի վերանորոգման խիստ կարիք: Համայնքում հատված-հատված կատարվել են վերանորոգման աշխատանքներ: Բնակչությանը անվճար և անխափան տրվում է խմելու ջուր՝ օրական 4-6 ժամ տևողությամբ:
3. Համայնքում պարբերաբար կատարվում է անվճար աղբաթափման աշխատանքներ /շաբաթը մեկ անգամ/: Գյուղի սանիտարական վիճակը գտնվում է բարվոք վիճակում:
4. Համայնքի կենտրոնական փողոցներում և գերեզմանատանը անցկացվել է ցերեկային լուսավորում:
5. Անցկացվել է 5 ավագանու նիստ, որոնք պատշաճ ժամկետներում ուղղվել են մարզպետարան, իսկ բյուջեում կատարված փոփոխությունները՝ հաստատված բյուջեն, ուղարկվել է Արդարատության նախարարություն՝ փորձագիտական քննության:
6. Բնակիչներին տրվել են 200-ից ավել տեղեկանքներ և տարբեր բնույթի փաստաթղթերի պատճեններ:
7. Ժամանակին և պատշաճ կերպով զինկոմիսարիատի հետ անցկացրել ենք զինակոչիկների կցագրման աշխատանքներ:
8. Վիճվարչություն է ներկայացվել նաև տարբեր բնույթի հաշվետվություններ, իսկ Ֆինբաժին՝ տարբեր բնույթի ֆինանսական հաշվետվություններ:
9. Բնակչության անապահով խավերին տրվել է տարբեր չափի ֆինանսական օգնություններ:
10. Ապրիլյան քառօրյա պատերազմի օրերին համայնքի համայնքապետարանի և բնակչության կողմից հավաքագրվել է սնունդ և առաջին անհրաժեշտության պարագաներ, որոնք ուղարկվել է ԼՂՀ:
11. Համայնքի մանկապարտեզի կառուցման նպատակով համայնքը որպես համաֆինանսավորում Համաշխարհային բանկին է փոխանցել 4 մլն դրամ:

Հանկապարտեղի կառուցման աշխատանքները փաստաթղթավորման գործընթացի մեջ են:

Չնայած կատարված աշխատանքներին, համայնքում կան նաև չլուծված հիմնախնդիրներ, որոնք բարձրացվեցին համայնքի բնակչության կողմից:

1. Համայնքում չի գործում կուլտուրայի տունը, որը գտնվում է վթարային վիճակում:
2. Խիստ վնասված և քայքայված է խմելու ջրի ցանցը, որը ունի ամբողջովին փոփոխման կարիք:
3. Խիստ անհրաժեշտություն է առաջացել գյուղապետարանի վարչական շենքի կտուրի վերանորոգումը:

Համայնքի ղեկավարի 2016 թվականի առաջին կիսամյակի հաշվետվությանը մասնակցում էր մարզպետարանի ներկայացուցիչ՝ Մ. Սարիբեկյանը:

Համայնքի ղեկավար՝



Կ. Հովհաննիսյան